




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿ

ԱՌԺՈՂԵՈՍԱՏ

ՍԱՆԼՈՒՍ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
№ 24

ԲԺ. Ա. ՄԱԴՈՅԱՆ

ՍԱՆԱԻՆԻՄՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

613.6

Մ-12

ԴԵՏԶԻՐԱՏ

ԲԺԶԻՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

21 JUN 2013


20 JUL 2010  
№ 24 ՍԱՆԼՈՒՍ ԳՐԱԴԱՐԱՆ № 24

613.6  
P-12  
պ. ԲԺ. Ա. ՄԱԴՈՑԱՆ

ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1008  
8007  
34641

ՊԵՏԶՐԱՏ  
ՅԵՐԵՎԱՆ



ԲԺՆԱԿԱՆ  
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
1932

# ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ ԴՊՐՈՅՈՒՄ

Խորհրդային Միութեան հարյուր հիսուն մի-  
լիոնանոց հսկա աշխատավորական բանակը լծվել է  
սոցիալիզմի կառուցման գործին, վոչ մի ղժվա-  
րություն չի կարող կասեցնել ու թուլացնել նրա  
թափը:

Այս տարի մենք հիմք դրինք սոցիալիզմի  
եկոնոմիկային, ձեռք բերելով հոյակապ հաջողու-  
թյուններ ծանր ու թեթև արդյունաբերութեան,  
գյուղատնտեսութեան սեկտորի աճման, զարգաց-  
ման, ու ամրապնդման, նույնը նաև կուլտուրա-  
կան ու պարտադիր ուսման ասպարիզներում:

Այդ Հաջողություններն աշխատավորութեանը  
ձեռք է բերել իր պողպատյա ավանգարդ՝ կոմու-  
նիստական կուսակցութեան հմուտ ղեկավարու-  
թյամբ:

Աշխատելու ու պայքարելու համար աշխատա-  
վորութեանն անհրաժեշտ է առողջություն, այս  
ասպարիզում ևս Խորհրդային իշխանութեանը հս-  
կայական աշխատանքներ է տարել ու խոշոր հաջո-  
ղությունների հասել: Զգալի կերպով իջնում է մա-  
հացութեան ու հիվանդացումների թիվը, ձեռք են  
առնված բոլոր միջոցները, վորոնք կանխարգելում  
են հիվանդությունները:

Այդ տեսակետից չափազանց կարևոր է ՀՍՄՀ-ի  
կենտրոնիզմի ու Ժողկոմխորհի վորոշումը, ըստ  
վորի բոլոր արտադրական վայրերում, բոլոր հիմ-

նարկ-ձեռնարկներում անց ե կացվում «սանիտարական միևնույն»։ Սան. միևնույնումը ինչպես անուշը ցույց ե տալիս, առողջապահական այն միևնույն ապահանջներն են, վորոնց անպայմանորեն պետք ե կատարել, անկախ որչեկտիվ պայմաններից։

Ժողկոմխորհի վորոշումը «սան. միևնույնումի» մասին, կարևոր ե առանձնապես նրանով, վոր նա միջոց ե նաե վողջ աշխատավորությանը մասնակից անելու առողջապահական գործին. այնպես ինչպես Լենինն ե ասել՝ «աշխատավորության առողջապահությունը իրենց աշխատավորության գործն ե»։

Անշուշտ, տարբեր բնագավառներում, սան. միևնույնումը տարբեր ե։ Մեր նպատակն ե ծանոթացնել թե դպրոցում ինչ սան. միևնույնում պետք ե անցկացնել։

Որեցոր աճում են մեզ մոտ դպրոցները, ու նրանց հետ բնականորեն, աճում ե նաե աշակերտության թիվը։ Այսոր մեր դպրոցներն ընդգրկում են համարյա վողջ մատաղ սերունդը, կյանքում իրագործելով պարտադիր ուսման խնդիրը։

Այդ իսկ պատճառով, մեր բոլոր մարմինները, աշակերտության համար պետք ե ստեղծեն առողջապահական միևնույն ապահանջները՝ «սան. միևնույնումը»։

Թե ինչ հսկայական նշանակություն ունի «սանիտարական միևնույնումի» անցկացումը դպրոցներում, յերեվում ե հենց նրանից, վոր դպրոցը մի վայր ե, ուր կուտակվում ե ամբողջությամբ մանկական հասակը, վորի որգանիղմը դեռ շատ նուրբ ե, վոսկորները չամրացած ե իր ամբողջ որգանիղմով հեշտ յենթակա դանադան հիվանդությունների։

Դպրոցական հասակումն ե, վոր մանուկներն ստանում են վորոշաչարի ծուռմներ, դպրոցական հասակումն ե, վոր վարակվում են տուբերկուլյոզով։ Պարզված ե նաե, վոր կարճատեսների մեծ տոկոսը տալիս ե դպրոցական հասակը ե այլն։

Այսպիսով, տեսնում ենք, վոր «սան. միևնույնումի» դերը դպրոցում շատ մեծ ե։

Նախ ե առաջ մի հիմնական ու չափազանց կարևոր հանգամանքի վրա պետք ե շեշտել. դա այն ե, վոր առողջապահական ֆրոնտում աշխատողները, մասնավորապես բժշկները (լինի դա քաղաքում, գյուղում, կոլխոզում, սովխոզում ե այլն) չպետք ե հեռու կանգնած լինեն դպրոցից. նրանք շարունակ պետք ե հսկեն դպրոցի առողջապահական վիճակին ե ամեն մի թերություն նկատելու դեպքում, անմիջապես միջոցներ ձեռնարկեն վերացնելու այն։

Բժիշկը կամ բուժակը իր պարտականությունները հաջողությամբ կատարելու համար սերտ կապ ե պահպանելու դպրոցի ուսուցիչների հետ։

Սակայն դա չի նշանակում, վոր ուսուցիչները, իրենց ամբողջ հույսերը դնեն բժշկի կամ ընդհանրապես տեղի առողջապահական այս կամ այն աշխատողի վրա ե հակառողջապահական յերեվոյթներն ժամանակ պատասխանատվությունը ձգեն միմիայն բժշկի վրա։ Ուսուցիչը նույնպես, ինչպես ե բժիշկը, ակտիվորեն պետք ե մասնակցի «սանիտարական միևնույնումը»-ը կյանքում իրականացնելու աշխատանքներին. նա բժշկի հետ ձեռք ձեռքի տրված պիտի վերացնի բոլոր հակառողջապահական յերեվոյթները։

Միմիայն բժշկի ե ուսուցչի միացյալ, համե-

բաշխ ու ակտիվ դործունեյությամբ դպրոցում  
կարելի յե գրական արդյունքների հասնել:

Ուսուցիչները դերը այս ասպարիզում մեծա-  
նում ե նրանով, վոր նրանք ավելի յերկար ժամա-  
նակ են յինում յերեխաների հետ, ավելի մոտ չփում  
ունեն նրանց հետ, մինչդեռ բժիշկը հազիվ կարողանա  
հաճախել դպրոց՝ Յորը փեկ անգամ և դուցե պա-  
կաս: Իհարկե շատ լավ կլինի այն դպրոցների դրու-  
թյունը, վորոնք իրենց համար ունեն առանձին դպ-  
րոցական բժիշկ, վորն ամեն որ հնարավորություն  
կունենա դիտելու ու հետեւելու, թե դպրոցի և թե  
աշակերտների առողջապահական վիճակին:

Իժպի և ուսուցչի մասնակցությունը սան. մի-  
նիմումի աշխատանքներին ապահովում ե նրա լրիվ  
կատարումը:

Սանմինիմումի արդյունքները լրիվ ապահովե-  
լու համար, աշխատանքներին պետք ե մասնակից  
անել անպայմանորեն նաև աշակերտությանը. առանց  
աշակերտության ակտիվ մասնակցության նշանա-  
կալից հաջողությունների հասնել անհնար ե:

Բայց ի՞նչ ձևով կազմակերպել սան մինիմու-  
մը դպրոցում. ի՞նչ ձևով մասնակից անել աշակեր-  
տությանը այդ կարևոր, բայց դժբախտաբար աչ-  
քաթող արված աշխատանքներին:

Դրա համար անհրաժեշտ ե, հենց սկզբից, ամ-  
բողջ աշակերտության համար կազմակերպել սիս-  
տեմատիկ զրույցներ ու ղեկուցումներ համապա-  
տասխան աշակերտների տարիքին ու պատրաստա-  
կանության:

Այդ զրույցներում կանգ պիտի առնել առողջա-  
պահական կարևոր խնդիրների ու սանմինիմումի  
հարցերի վրա: Ավելի լավ ե զրույցները կազմակեր-

պել ըստ խմբակների: Իժպի զրույցները նպատակ  
պիտի ունենան դպրոցներում սանմինիմումը կա-  
մաց-կամաց աշակերտության սեփականությունը  
դարձնելու:

Չպիտի բավականանալ մեկ կամ մի քանի զր-  
ույցներով. վոչ ել նրանք կրելու յեն կամայանիայի  
բնույթ, այլ աշխատանքները պետք ե տանել պար-  
բերաբար ու անընդհատ, վորպեսզի աշակերտու-  
թյունը կարողանա սովորել սան. մինիմումի որենք-  
ները և վոչ միայն սովորի, այլև վարժվի ու յու-  
րացնի, դործադրի առօրյայում: Նրանց մեջ պետք  
ե մասսայականացնել սան. մինիմումի բոլոր կա-  
նոնները:

Կատարման կանոնների հսկողությունը պետք  
ե հանձնել վոչ միայն բժիշկին ու ուսուցչին, այլև  
աշակերտներին: Դրա համար անհրաժեշտ ե ամեն  
մի խմբակում կամ դասարանում ունենալ սանկոմ-  
ներ, վորոնք հսկեն սանմինիմումի կանոնները  
դործադրման:

Ցանկալի յե, վոր խմբակային այդ սանկոմները  
ժամանակ առ ժամանակ փոփոխվեն, վորպեսզի ա-  
վելի մեծ չափով աշակերտություն անցնի այդ աշ-  
խատանքների բովով:

Բացի մի դասարանում ու խմբակում սանկոմ-  
ներ ունենալուց, անհրաժեշտ ե, դպրոցում ունենալ  
մի մարմին ևս, վոր շարունակ հսկի ամբողջ դպ-  
րոցի առողջապահական վիճակին ու սան. մինիմու-  
մի կատարմանը: Այդ կենտրոնական մարմնի մեջ,  
անշուշտ, պետք ե մտնեն՝ բժիշկը, ուսուցիչը, ա-  
շակերտությունը, կոմսոմոլի բջիջի և պիոներ կո-  
լեկտիվի ներկայացուցիչները, վորոնք վորպես կազ-  
մակերպության ներկայացուցիչներ, կազմակերպ-

ցիած ձեւով կ'կարողանան աշխատանքներին լայն ծավալ տալ:

Այդ կենտրոնական մարմնի ֆունկցիան պետք է լինին, սան. միւնիստրի կոնկրետ մշակումը, նրա կատարումը, աշխատանքների բաժանումը և այլն, հարմարեցնելով այն դպրոցի պայմաններին: Իհարկէ այս բոլորը կատարվում է բժշկի անմիջական մասնակցութեամբ ու ղեկավարութեամբ:

Սան. միւնիստրի կանոնները աշակերտութեան նկատմամբ ու արյուն են դառնալու, նրա ամենորոյս սովորութիւններ:

Անհրաժեշտ ու կարեւոր սանիտարական կանոնները, լոգոնոզների ձեւով, ազդեցիկ, կարճ ու կոնկրետ, պարզ ու հասկանալի լեզվով գրած փակցանքներ պատերին, վորպեսզի նրանք մեխվեն աշակերտների ուղեղի մեջ: Պետք է ոգտադործել այն բոլոր հնարավորութիւնները, վորոնք կան, մասնաւորապէս քաղաքում, ինչպիսիք են որինակ՝ առողջապահական թանգարանները, մողեւները, նկարները և այլն:

Կարճ ասած, աշակերտներին այն աստիճան պետք է ներգրավել այդ աշխատանքների մեջ, վոր նրանք կարողանան հսկել միմյանց և սանիտարական կանոնների կատարումը դարձնեն վողջ աշակերտութեան սեփականութիւն:

Մի շարք տեղերում փորձը ցույց է տվել, վոր անկողնական շրջանում նույնիսկ կարելի չէ կազմակերպել մաքրութեան և սանիտարական միւնիստրի անդիկացման տասնորոյակ, ուր անպայմանորեն պիտի ներգրավել ամբողջ աշակերտութիւնը:

Նախ և առաջ մեծ ուշադրութիւն պետք է դարձնել դպրոցական շէնքի մաքրութեանը, վորի

հսկողութիւնը պետք է հանձնել վողջ միային բժշկին և ուսուցիչներին, այլև աշակերտներից ընտրված մարմիններին և ամբողջ աշակերտութեանը:

Խստորեն պետք է հետեւել, վոր սենյակի հատակը լինի մաքուր, չթքել, չխնչել, թուղթ ու զանազան թերթեր չթափել:

Մաքուր պետք է պահել նաև պատերը, չաղտոտել, չզրել ու չնկարել պատերին:

Դպրոցի համար պետք է ընտրել լավ և լուսավոր շէնք: Միանգամայն անթույլատրելի չէ, յերբ դպրոցի լավ սենյակները փոխանակ դասարան դարձնելու, ծառայեցնում են բոլորովին այլ նպատակների, ինչպես որինակ՝ ուսուցչանոց, բնակարան և այլն: Մինչդեռ լուսավոր սենյակները պետք է հատկացնել դասարանների կարիքներին:

Ներկայումս մեր դպրոցներն այլևս հինը չեն. նրանք հանդիսանում են պոլիտեխնիկական կրթութեան հնոցներ:

Դպրոցներին կից կազմակերպվում են արհեստանոցներ, վորոնց թիւին որեցոր աճում է, լայն գոթախտութիւնը նրա մեջ է, վոր այդ արհեստանոցները կազմակերպվում են ամենամութ, սամեռախոնավ սենյակներում, հաճախ ել ներքնահարկում, վորտեղ ողավոխութիւն չատ քիչ է կատարվում: Դա միանգամայն անթույլատրելի չէ: Աշակերտութիւնը հաճախ ժամերով մնում է արհեստանոցում. արհեստանոցը խլում է նրանից որվա քաղաքական մեծ մասը, նա կապվում է արհեստանոցի հետ աշխատանքային սերտ կապով, զգալով անկեղծորեն, վոր աշխատանքը փառքի, պատվի ու հերոսութեան գործ է:

Ուրեմն ամեն մի դպրոցում պետք է արհեստա-

նոցի համար հատկացնել լավ սենյակ, վորը նախ  
և առաջ պետք է լինի լուսավոր, չոր ու քիչ թե շատ  
ընդարձակ:

Արհեստանոցի առողջապահական վիճակը կարե-  
վոր է նրանով, վոր ախտեղ մեր մատաղ սերունդը  
կատարում է ֆիզիքական աշխատանք, կորցնելով  
մեծ եներգիս:

Դասամիջոցին թույլ չպետք է տալ աշակերտ-  
ներին մնան դասարանում: Պետք է լողունգ ընդու-  
նել՝ դասամիջոցի ժամանակ վաղ մի աշակերտ դա-  
սարանում:

Դասամիջոցի հինգ տաս րոպեները պետք է ող-  
տագործել դասարանի ողը մաքրելու վրա, դրա  
համար անհրաժեշտ է բացել լուսամուտները մինչև  
աշակերտների դասարան մտնելը:

Աշակերտները, յեթե դասարաններում մնան,  
կտուժի նրանց առողջապահությունը, մի շարք  
պատճառներից:

Նախ՝ 3-5 ժամ չնչել ապականած ողը, ան-  
շուշտ, վնասակար է. յերկրորդ՝ դասարանում մնա-  
լով ե՛լ ավելի կապականեն ողը, իրենց թուլություն-  
ով, վազվզելով ու խաղալով ամբիլի փոշի կբարձ-  
րացնեն. մինչդեռ աշակերտներին դուրս հանելով  
դասարաններից և լուսամուտները բացելով, և  
դասարանի ողն է մաքրվում և՛ աշակերտությունն  
որովա ընթացքում մի քանի անգամ մաքուր ու թարմ  
ող չնչում, աշխուժանում ու թարմանում:

Բայց պետք է աշխատել, դասամիջոցի ժամա-  
նակ, մաքուր ողում, աշակերտները զբաղվեն թևթև  
խաղերով, վորպեսզի կարողանան թարմանալ, աշ-  
խուժանալ, բայց չբռնել ու չհոգնել. մի խոսքով  
պետք է խուսափել ծանր ու հոգնեցուցիչ խաղերից:

Բացի լուսամուտներից, դասարանները պիտի  
առնենան ողանցքներ: Վերջիններն ախպես պետք է  
չինված լինեն, վոր բացվեն գեպի վեր, սառն ու մա-  
քուր ողը ներխուժելիս հանգիպի ապակուն, անց-  
նի գեպի առաստաղը, վորտեղից հանդարտորեն նա  
տարածվի ամբողջ դասարանի մեջ, սուսնց քամու  
ուժեղ հոսանքներ առաջացնելու:

Մի շարք դպրոցական շենքերում պարտադրու-  
ները լինում են մի քանի հերթի, վորից դասարանի  
ողը սոսկալի ապականվում է:

Հերթափոխությունների ժամանակ, յերբ աշա-  
կերտներ չկան, անպայման պետք է ողափոխել դա-  
սարանները: Բայց ժամանակի կարճության պատ-  
ճառով, լավ ողափոխելու համար, կարելի չե բաց  
անել և՛ լուսամուտները և՛ դռները, առաջացնելով  
հանգիպական քամի, վորը շատ լավ է մաքրում  
ողը:

Դասարանները պետք է մաքրել ու ավելի դա-  
տերից հետո, վորպեսզի մինչև հաջորդ պարադ-  
մունքը, ողի փոշին նստի հատակին:

Առավոտյան ժամերին, կամ ընդհանրապես  
աշակերտների գալուց կես ժամ կամ մեկ ժամ ա-  
ռաջ դասարանները ավելին արգելվում է:

Չի կարելի ավելի նաև դասամիջոցների ժամա-  
նակ: Դասարանի իրերի փոշին պիտի վերցնել խո-  
նավ չորով:

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել, վոր  
միայն դպրոցական շենքի, այլև նրա բակի ու շր-  
ջապատի վրա: Շրջապատը և բակը պետք է պահ-  
վեն միանգամայն մաքուր, յերկաթի ու քարի կը-  
տորներ չպետք է լինեն, չպետք է լինեն նաև փոսեր  
ու թմբեր:

Աղբ ու զտնադան կեղտոտութիւններ վոչ մի գեպըում չպիտի թափել բակում կամ շենքի շրջապատում: Հետեւիւ աղբատեղի ու արտաքնոցի մաքրությանը: Աղբարկղը անպայման պետք է ունենա ծածկ: Լցվելու դեպքում թափել ու թույլ չտալ, վոր նրա շուրջը թափվի ու հաւաքվի աղբակոյտը:

Սիւսեմատիկորեն պետք է հետեւել նաև արտաքնոցին, չաղտոտել նրա հատակը ու պատերը՝ անհրաժեշտ է հաճախակի մաքրել ու ողհանել: Թե աղբարկղը, թե արտաքնոցը պետք է հեռու լինեն կենտրոնական շենքից:

Յեթե դպրոցի բակում կամ նրա շրջապատում կան փոքրիկ կամ մեծ ճահիճներ, անպայման պետք է չորացնել:

Չորացնելու համար կարելի չէ փոքրիկ առօխ միջոցով հեռացնել ջուրը:

Յեթե ճահիճ տեղն այնպես է, վոր չորանալուց հետո անձրեւներից նորից կարող է ճահիճ առաջանալ, այն ժամանակ ջուրը հեռացնելուց հետո, անհրաժեշտ է փոս տեղերը չոր ու մաքուր հող լըցնել ու հաւասարեցնել:

Ճահիճներին պետք է վերջ տալ վորովհետև նրանք դառնում են մոծակների բուն, վորից և տարածվում է մալերիան՝ սոցիալական մեծ չորիքը:

Ամեն մեկը պետք է հիշի, վոր պայքարը ճահիճների դեմ, պայքարը մալերիայի դեմ, պայքար է աշխատավորության ու սերնդի առողջացման համար:

Ուսուցիչների, սան. միւնիսթում մշակող հանձնաժողովի ու սանկոմների միջոցով շարունակ պետք

է հսկել աշակերտների մաքրությանը: Նախ և առաջ ուշադրութիւն պետք է դարձնել ձեռքերի յեղունակների մաքրությանը:

Աշակերտների ձեռքերը պետք է լինեն միշտ լվացված ու մաքուր, յեղունակները կտրած: Աշակերտներից պետք է պահանջել, ամեն առավոտ լրվացվել մաքուր:

Հատուկ ուշադրութիւն դարձնել քթի և աւանջի մաքրությանը: Աւարանի շրջանի դպրոցական յերեխաների քննութիւնից պարզվեց, վոր խոշոր տոկոսը քթի պնչերում ունի վերքեր, քթից շարունակ ջուր հոսելու ու չարբիլու պատճառով: Մի՞թե ուսուցիչը չի կարող պահանջել, վոր աշակերտի քիթը լինի մաքուր, իհարկե կարող է, աշակերտին պիտի հասկացնել այդ թեկուզ հասարակ սակայն առողջապահության ու մաքրության տեսակետից անհրաժեշտ խնդիրը. մաքրութիւնը աշակերտության համար միս ու արյուն պիտի դարձնել, այն ժամանակ արդեն աշակերտները կհետեւեն իրար մաքրության: Մազերը լաւ է տակից վերցընել և դուխը պահել մաքուր:

10 որը մեկ անգամ լողանալ և փոխել սպիտակեղենը: Հետեւիւ հադուստի մաքրությանը մաշտանդ պայքարել միջատների առաջանալու դեմ:

Պետք է պահանջել, վոր ձեռքերի, քթի, աւանջների և ընդհանրապես մարմնի մաքրության աշակերտութիւնը հետեւի կանոնավոր ու սիստեմատիկաբար, մինչև դառնա ամենօրյա սովորութիւն, մի կենցաղ, մի անհրաժեշտութիւն:

Մոռացության չպիտի տալ առամների մաքրութիւնը: Առամները լվանալ ամեն օր, ալիւլի լաւ է մաքրել յերեկոները՝ քնելուց առաջ:

Ատամները մաքրելիս՝ խողանակը պետք է քր-  
ակել վոչ թե աջից ձախ և ձախից աջ, այլ վերից վար  
և վարից վեր, դրսի և ներսի յերեսները միաժամա-  
նակ:

Լվացվելիս պետք է լվանալ նաև աչքերը: Կեղտոտ  
ձեռքերով չափտի աչքերին ձեռք տալ: Մի քանի  
հոգով մի սրբիչ զործածելու դեպքում հեշտու-  
թյամբ կարելի չե վարակվել տրախոմայով:

Ամեն մի դպրոց պետք է ունենա լվացարաններ,  
ապոն և սրբիչ: Լվացարանների քանակը պետք է  
համապատասխանի աշակերտների թվին (15-20  
աշակերտին մի լվացարան):

Ամեն մի դպրոց պետք է բավարարված լինի  
մաքուր խմելու ջրով: Չուրը պետք է պահել ծորակ  
ունեցող փակ ամաններում:

Միևնույն բաժակով բոլոր աշակերտներին չի  
կարելի ջուր խմացնել, իսկ ծորակից խմել, նույն-  
պես անթույլատրելի չե: Վերջին ժամանակներս  
գործադրվում է ծորակի Փունտանային ձեվը, վորը  
ամենից առողջապահականն է: Դպրոցում պետք է  
պատրաստել հետևյալ ձեվով:

Ամառը լի ջրով պետք է դնել դետնից մեկ կամ  
մեկ ու կես մետր բարձր պատվանդանի վրա: Նրա  
ստորին մասից իջեցնել խողովակը, վորի վերջին  
ծայրը լինի քիչ բարձր, իսկ վերեվի մասում ունե-  
նալ կռան, վորը բացելիս ջուրը Փուտանի ձեվով  
դրում է: Բայց վորպեսզի խմելիս աշակերտները  
իրենց չթռնան և չգլխեն ծորակի յեզրերին,  
նրա ծայրին կարելի չե անցկացնել ձաղարածել մի  
մարմին, վոր թույլ չի տա չթռնանքներին ծորակին  
կպչելու:

Սանմինիումի ամենահիմնական, ամենակա-

րևոր կանոններից մեկը պետք է լինի աշակերտու-  
թյան Ֆիզկուլտուրայի հարցը:

Ֆեզկուլտուրան չպետք է կատարել դասամի-  
ջոցներին. դասամիջոցները պետք է ողտազործեյ  
աշակերտների հանգստի համար: Ամեն մի դպրո-  
ցում, անկախ թե նա ինչ տիպի դպրոց է, Ֆիզ-  
կուլտուրայի համար անհրաժեշտորեն հատկացնելու  
չեն ակադեմիական հատուկ ժամեր:

Ֆիզկուլտուր պարապմունքներն անպայմա-  
նորեն պետք է կատարել դրսում՝ մաքուր ողում:

Նախքան Ֆիզկուլտուր պարապմունքի սկսելը,  
ամբողջ աշակերտութունը պետք է յենթարկել բը-  
ժշկական քննության, հետագայում ևս Ֆիզկուլտ  
պարապմունքները տանել բժշկի խորհուրդներով ու  
նրա անմիջական հսկողության տակ:

Ֆիզկուլտուրան ամրացնում է, ամրասնդում է  
որդանիքը: Ֆիզկուլտուրան աշակերտական կուլլեկ-  
տիվի կազմակերպման մի ձեվն է: Բայց վոչ մի  
դեպքում չի կարելի Ֆիզկուլտ պարապմունքները  
չափից անցկացնել, վորովհետև աշակերտի որդա-  
նիքը դեռևս կազմակերպման ու զարգացման չըր-  
ջանն է սպրում, վոսկորները դեռ դալար են:

Լավ կազմակերպված, բժշկական հսկողու-  
թյան տակ տեղի ունեցող Ֆիզկուլտուրան որդա-  
նիքի առողջացման կարևորագույն ազդակներից  
է, յերբ մանավանդ գիտենք, թե ինչպես պետք է  
զործածենք:

Սխալ գործածվող Ֆիզկուլտուրան վնասում է  
և թույն է որդանիքի համար:

Վոչ մի դեպքում աշակերտներին չի կարելի  
թույլ տալ Փուդբոլ խաղալու:

Ֆուտբոլ կարելի չէ խաղալ 18 տարեկանից բարձր, այն եւ ընտելութունից հետո:

Հանցագործությունն է, յերբ հաճախ դպրոցի բակում պատրաստում են տուռնիկներ, ձեռք են բերում զանազան ծանրություններ և ապա աչակերտներին զբաղեցնում նրանցով, արհեստականորեն ուժեղացնելով նրա սիրտը դեպի ծանր ատրեատիկան ու այդ ձեւով վնասելով նրա ֆիզիկականը:

Ֆիզիկուլտուշան գլխավորապես զբաղվելու չէ աչակերտության ծարմնի ազատ շարժումներով:

Համաչափ շարժումները զարգացնում են ծարմնի բոլոր մասերը, ամրացնելով բոլոր մասերը, ամրացնելով սմբողջ օրգանիզմը ներդաշնակորեն. սա չէ հիմնականը: Վերջի վերջո պետք է իմանալ, վոր ֆիզիկուլտուրան է աշակերտի համար և վոչ թե աչակերտը ֆիզիկուլտուրայի համար:

Յեթե կան ֆիզիկուլտուրայի բազմաթիվ ձեւեր, դա դեռ չի նշանակում, վոր աչակերտը բոլոր ձեւերով եւ պետք է զբաղվի, առանց նկատի ունենալու թե նա ոգտակա՞ր է, թե վնասակար:

Բայց ֆիզիկուլտուրային հատկացրած միայն պաշտոնական ժամերը բավական չեն: Դա կլինի մեխանիկական մոտեցում: Աչակերտի օրվա ամբողջ ժամերը պետք է այնպես դասավորված լինեն, վոր նա ամբողջ օրը ֆիզիկապես և մտավորապես լինի առույգ և աշխուժ: Ամեն մի դպրոց հետեւելու չէ այն կարեւոր լողունգին, թե աչակերտի ամբողջ 24 ժամը պետք է լինի ֆիզիկուլտուրա բառիս ամենալայն իմաստով:

Յեթե ֆիզիկուլտուրային պարապմունքները գրսում հնարավոր չեն կատարել, այս կամ այն

պատճառով, այն ժամանակ սենյակը կամ դահլիճը, վորտեղ կատարվելու չէ ֆիզիկուլտուրան, պետք է անպայման մաքրվի, մանավանդ հատակը, վորից կարող է առաջանալ մեծաքանակ փոշի. փոշին պետք է հեռացնել թաց կամ խոնավ շորով:

Բացի ընդհանուր մաքրությունից, մարզադահլիճը և միայն մաքուր ու թարմ ողում կատարել ֆիզիկուլտ պարապմունքները:

Դպրոցներում ուղադրություն չեն դարձնում մի լիճը, նախքան պարապմունքները, պետք է ողափոկարեւոր խնդրի վրա ևս: Աչակերտները հաճախ վերարկունքով մտնում են լսարան և նույնիսկ վերարկույով նստում. դա շատ հակառողջապահական է: Աչակերտն այդ ձեւով դասարան է բերում վոչ միայն փոշի, այլև միկրոօրգանիզմ, բացի դրանից վերարկույով նստած աչակերտը, դուրս դալիս, հեշտությամբ կարող է «մրսեյ» և վերջապես վերարկվի մեջ յերեսան իրեն թեթե ու ազատ չի գլուխ:

Ամեն մի դպրոց պետք է ունենա հանդերձարան, ուր հանելու և կախելու չեն վերարկուները: Հանդերձարանը կարելի չէ կազմակերպել թեկուզ հենց սանդուխքների տակ, միջանցքի այս կամ այն ծայրում, յեթե ավելի հարմար տեղ չկա:

Պետք է խուսափել թիթեղյա վառարաններից: Այնտեղ, վորտեղ հնարավոր չէ այլ վառարաններ ունենալ, վառարանը վառել աչակերտների բացակայության ժամանակ: Աչակերտների դասարանում յեղած ժամանակ վառարանը չի կարելի վառել, վորովհետեւ ջերմության մեծ տարբերությունը վատ է անդրադառնում յերեսանների առողջության վրա: Վերջապես հենց աչակերտները կարող են կպչել չիկացած վառարանին և այրել մարմնի այս

կամ այն մասը: Դասարանի ջերմաստիճանը չափարձը չպետք է լինի. նրա ջերմությունը պետք է հասնի  $R. + 14^{\circ}$ -ի

Սանմիկիմումի պահանջները մեջ պետք է մտցնել նաև թքամանները: Յանկալի յե, վոր թքամաններում վոչ թե ավազ լինի, այլ ջուր, մեջը խառնած այս կամ այն թույնից. որինակ՝ կարրուլյան թթու և այլն, կարելի լինի ախտահանել խորխը և վոչնչացնել մանրեները: Թքամանների մեջ կարելի յե ածել նաև թեփ, սակայն պիտի հաճախ փոխարինել հին թեփը նորով և այլել, թքամանները միշտ պահելով մաքուր:

Բժիշկը և ուսուցիչները պարտավոր են կադմակերպել դպրոցներում փոքրիկ գրադարաններ կազմված հանրամատչելի առողջապահական բրոշյուրներից, վորոնք սխտեմատիկաբար պիտի բաժանել աշակերտներին. յով ե, վոր կարգացած բրոշյուրների նկատմամբ ստուգումներ կատարվեն, թե վորչափով են ըմբռնում. աշակերտներին պետք է բաժանել այն առողջապահական գրքույկները, վորոնք հրատարակվում են Առժողկոմատի կողմից:

Դպրոցի կարմիր անկյունում պետք է ունենալ նաև սանիտարական գրականություն, առողջապահության թերթեր, ամսագրեր, պլակատներ և այլն: Հնարավոր սահմաններում սանկուստիօրության աշխատանքները կարելի յե կենտրոնացնել քնթեցարարում:

Դպրոցի պատի թերթում ունենալ «սանիտարական միկիմում» ու սխտեմատիկորեն տեղավորել համապատասխան նյութեր: Ամեն ջանք

դործ դնել, վորպեսզի այդ անկյունը լինի նկարագրող ու հրապուրիչ:

Հարկավոր է հատուկ աշխուժություն մտցնել սանիտարական կրթության ասպարիզում: Բացի գրադարան-քնթեցարանից և պատի թերթերից, պետք է հատուկ աշխուժական պարտադիր ժամեր հատկացնել դպրոցներում սանիտարական կրթության և առողջապահության: Վերջին պահանջն անպայման մտցնել սան. միկիմումին վերաբերվող խնդիրների շարքը: Մարդու որդանիլմի առողջացման խնդիրները և առաստարակ առողջապահության, սանիտարական կրթությանը պետք է հատկացնել իր արժանի տեղը դպրոցական ծրագրում:

Ի նկատի ունենալով այն, վոր մեզ մոտ որեցոր աճում է արդյունաբերությունը, բազմանում են, զարգանում են ֆաբրիկաները, գործարանները, սոցիալիստական սեկտորը, ինդուստրիայի յենթարկվում, ուժեղանում է տրանսպորտը, աշխուժանում է կյանքը, այս բոլորը մեծ պահանջ են դնում աշակերտության առաջ, տիրապետել ընտապ ոգնության կանոններին:

Իսկ դրա համար անհրաժեշտ է դպրոցներում կազմակերպել առաջին ոգնության խմբակներ և նրանց հետ անցնել ու գործնականորեն ցույց տալ չտապ ոգնության բոլոր ձևվերն ու մեթոդները:

Ամեն մի դպրոց պետք է ունենա իր փոքրիկ դեղարկղը անհրաժեշտ դեղանյութերով: Դպրոցներում քիչ չեն վիրավորման ու զանազան դժբախտ դեպքերը, վորոնք անհրաժեշտություն են դարձնում դեղարկղ ունենալը: Եթեկուրսիաների

ժամանակ անհրաժեշտ է վերցնել նաև դեղապայուսակ իր անհրաժեշտ դեղանյութերով:

Դեղարկղը պետք է ունենա հետևյալ դեղանյութերն ու գործածության այլ իրերը՝

- 1) Ստերիլ բինտ 10-15 հատ:
- 2) Հիգրոսկոպիկ բարձակ 400-600 գրամ
- 3) Հասարակ մառա 2-3 մետր:
- 4) Յոդի լուծույթ 50-100 գրամ:
- 5) Նաշադիրնի սպիրտ 30-50 գրամ:
- 6) Վալերյանի կաթիլներ 50-50 գրամ:
- 7) Բորաթթվի 2 տոկոս. լուծույթ 200-300 գր.
- 8) Յուգաթուղթ 2-3 մետր:
- 9) Մկրատ 1 հատ:
- 10) Անգլիական քորոցներ 15-20 հատ:
- 11) Վազելին 50-80 գրամ:

Սանմիինմումի կարևոր կետերից մեկն էլ պետք է լինի դասարանների լուսավորության հարցը: Մի բան պետք է ընդմիշտ հիշել, վոր լույսը պետք է ընկնի աշակերտի ձախ կողմից: Նստարաններն ու գրատախտակը պետք է դասավորել այնպես, վոր հնարավորություն լինի լույսը ստանալ ձախ կողմից, մինչդեռ մինչև հիմա, շատ դպրոցներում զանց են առնում այդ տարրական կանոնը: Լուսամուտների ընդհանուր մակերեսը պետք է հավասարվի դասարանի հատակի  $1/6$ -ին: Այնտեղ վորտեղ այդ մակերեսը փոքր է, պետք է մեծացնել կամ նոր լուսամուտներ բացելով կամ յեղած լուսամուտները լայնացնելով:

Ինչ վերաբերում է արհեստական լուսավորության, պետք է ասել, վոր լույսի աղբյուրը լինի բարձր այնպես, վորպեսզի նրա ճառագայթ-

ներն ընկնեն ուղղահայաց: Կարևոր է, վոր լույսն անմիջապես ընկնի դասարանի հատակին, այլ դրա համար ցածից կախել մի ծածկիչ, լույսը չեկել առաստաղին և ապա ցրված ձեւով լուսավորել դասարանը:

Այլից և յետևից ընկած լույսը անընդունելի յե, վորովհետև տետրի վրա առաջանում են գրչի, մատիտի ձեռքի կամ մարմնի ստվերներ, վորոնք և խանգարում են գրելուն, իսկ առջևից յեկած լույսն ընկնում է ուղղակի աչքերին, չարունակ չարման մեջ պահելով պարապողին, վորը հապեցնում է և թուլացնում աշխատանքի վորակը:

Քիչ կարևոր չէ նաև գրքի հեռավորությունը: Դիրք կարգալիս կամ գրելիս, ընդհանրապես չի պետք է վոչ շատ հեռու բռնել և վոչ շատ մոտ, պետք է սովորել և պահել 25-30 սանտիմետր հեռավորության վրա:

Վերը հիշատակած պայմանների բացասումը յերեխաների մեջ առաջացնում է կարճատեսություն:

Քննությունը ցույց է տվել, վոր դպրոցներում կարճատեսությունը տալիս է հետևյալ թվերն ըստ դասարանների՝

Ուսման առաջին տարին աշակերտների մեջ նկատվել է  $8,8\%$ , յերկրորդ տարին՝  $10,4\%$ , յերրորդ տարին՝  $19,7\%$ , չորրորդ տարին՝  $11,2\%$ , հինգերորդ տարին  $15,2\%$ , վեցերորդ տարին՝  $16,8\%$ , յոթերորդ տարին  $19,7\%$ , ութերորդ տարին  $22,3\%$ :

Այսպիսով տեսնում ենք, թե ինչպես տարեց տարի կարճատեսների թիվն ավելանում է: Վորքան բարձր է դասարանը, այնքան մեծ է կարճա-

տեսներն թիւր: Մինչդեռ լուսավոր դասարաններն ու լույսի կանոնավոր ոգտագործումը չեր տալ կարճատեսների այդ խոշոր տոկոսը, վորը բնականորեն անդրադառնում է մեր ժողովրդական անտեսութեան վրա: Այնպէս վոր վերը հիշատակված երանոնների պահպանումը պիտի ընդունել անհրաժեշտութիւնն և խստորեն հետեւել նրանց կատարմանը:

Գրատախտակը աշակերտներից այնքան ել հեռու չպետք է լինի, վոր կարդալիս ստիպված լինեն տեսողութիւնը լարել: Տեսողութեան լարումը շատ է հոգնեցնում աշակերտներին և թուլացնում է նրանց աշխատանքի արդյունավետութիւնը: Գրատախտակը չպետք է լինի նաեւ շատ մոտ աշակերտին, վորից կարող է առաջանալ կարճատեսութիւն, կամ վերջինս ուժեղանալ: Գրատախտակը չպետք է նայել փայլի, փայլը խանգարում է ընթերցումը և լարման մեջ պահում աշակերտին, վորպէսզի չփայլի, պետք է լակ քսել: Ներկել հասարակ ներկով կամ ուղղակի մրով և յուղով, ինչպէս այդ արվում է համարյա մեր բոլոր դպրոցներում:

Թույլ չպետք է տալ, վոր ներկը դնա, այն ժամանակ շատ դժվար է գրվում ու դժվար կարդացվում, մանավանդ հեռու նստած աշակերտների համար:

Աշակերտական նստարաններն ու դրասեղանները մեծ կարեւորութիւն են ներկայացնում մտադ սերնդի ֆիզիկականի տեսակետից: Հակառակ դասարանական նստարաններն ու դրասեղանները, ինչպէս և աշակերտների անկանոն նստվածքները առաջ են բերում վողնաչարի ծուլթիւն:

Աշակերտներին պետք է սովորեցնել կանոնավոր նստելու ձեւերը:

Բայց դժբախտութիւնը նրանումն է, վոր հաճախ նոր նստարանների ու դրասեղանների վրա վորմի դեպքում ցցված մեխեր չպետք է լինեն, չպետք է լինեն նայել պոկված տախտակի կտորներ, վորոնք կարող են վերքեր հասցնել աշակերտներին:

Գարնանը և աշնանը պետք է կազմակերպել ծառատունկ դպրոցի շրջապատում և բակում, այդ աշխատանքներին մասնակից անելով վողջ աշակերտութեանը:

Կանաչադարձի նշանակութիւնը չափազանց մեծ է, թե ողի մաքրութեան տեսակետից, թե փոշու դեմն առնելու և թե քամիները մեղմացնելու:

Յեթե հարմար տարածութիւն կա կարելի յետքրիկ պարտեզի վերածել, գարնանը կարելի յեայնտեղ ցանել ծաղիկներ ու զանազան տունկեր և այդպիսով դետինը կանաչադարձ դարձնել:

Մեզ մոտ ծառատնկման խնդիրը, մանավանդ դպրոցների շրջաններում, համարյա մոռացութեան է տրված կամ շատ քիչ է ուշադրութիւն դարձվում, մինչդեռ չի կարելի անտեսել ծառատունկերի հսկայական առողջապահական նշանակութիւնը:

Գլորոցում կարելի յե վարակվել ծաղիկով, քութեշով և այլ վարակիչ հիվանդութիւններով: Անշուշտ բժշկի և ուսուցիչի ուշադրութիւնը պետք է բեւեռվի այդ ուղղութեամբ և կանխեն հիվանդացման դեպքում:

Դրա համար անհրաժեշտ է—

1) Ամբողջ դպրոցի աշակերտութիւնը կազմակերպված ձեւով պատվաստման յենթարկել (ծաղիկ և այլն):

2) Քաղաքում թե գյուղում, համաճարակներ ժամանակ, դպրոցների ամբողջ աշակերտությունը պետք է յենթարկվի բժշկական քննության և նրանց պահել ուժեղ հսկողության տակ:

3) Հետեվել, վորպեսզի հիվանդ աշակերտները դպրոց չհաճախեն:

4) Վարակիչ հիվանդ ունեցող ընտանիքները նույնպես հսկողության տակ պետք է առնել, վորոշ ժամանակով պետք է այդ տների առողջ աշակերտներին նույնպես արգելել դպրոց հաճախումը:

5) Ուժեղ համաճարակների ժամանակ, յեթե առողջապահական մարմինները կգտնեն, վոր անհրաժեշտ է վորոշ ժամանակով փակել դպրոցը, արձակելով աշակերտությունը, պետք է անեն, բայց բարեբախտաբար, չնորհիվ մեր պետության կողմից ձեռք առնված կտրուկ միջոցների, համաճարակներին վերջ է արվում և դպրոցները փակման առաջ չեն կանգնում:

Դպրոցի վարիչները հաճախ բողոքում են, վոր հնարավորություն չունեն, պահատում են ռեսուրսները կյանքում իրականացնելու սան-միխիմովի բոլոր կանոնները: Նրանք աչքաթող են անում աշակերտի ծնողներին, մոռացության տալով, վոր նրանց մեջ կան և հյուսներ և յերկաթագործներ և պտուղաբներ և ընդհանրապես շատ ու շատ արհեստների մարդիկ, վորոնք չեն մերժի դպրոցին այս կամ այն ոժանդակությունը ցույց տալու, յեթե իհարկե դպրոցի ուսուցչությունը և վարչությունը կարողանան կազմակերպել ծնողական համաձայնողովների աշխատանքները և նրանց մասնակցությունն ու ոժանդակությունը՝ դպրոցի շինարարական գոր-

ծում, բառիս յայն իմաստով: Սա կարեւոր է, մանավանդ շրջանների դպրոցների համար:

Աշխատանքները պետք է ծավալել այնպես, վոր աշակերտությունը պատասխանատվություն զգա իր դպրոցի առողջապահական վիճակի համար:

Մի կարեւոր հանգամանք ևս պետք է չեչտել, վորքան դժվար է սանիտարական առողջապահական սովորությունները մտցնել մեծահասակ բնակչության մեջ, այնքան հեշտ է այն մեր յերիտասարդ ու մատաղ սերնդի նկատմամբ: Մեծահասակների հետ դժվար է, վորովհետեւ նրանք տիրապետում են դեռ բավականի հին կենցաղի մնացած այլանդակ ու միանգամայն հակառողջապահական սովորություններին, նրանց համար դառել է միս ու արյուն և այնքան երհեշտությամբ չեն ուզում բաժանվել «պատկենական սովորություններից»:

Յերիտասարդ սերունդը գերծ է հին կենցաղի այդ այլանդակ կողմերից և նա շատ հեշտությամբ է սովորում ու ընտելանում կուլտուրական և առողջապահական պահանջներին: Յեւ վոր միայն ինքն է սովորում, այլ և սովորածը տարածում է մեծահասակների ու ընտանիքների մեջ:

Գաղտնիք չէ, վոր մեր կոմյերիտականները, պիոներները և ընդհանրապես առաջավոր յերիտասարդությունը առողջապահական խնդիրներում ավելի բարձր են կանգնած, քան նրանց ծնողները, վորոնք կապիտալիստական կառուցվածքի ճնշված գոհերն են:

Սանիտարական միխիմովը դա հանդիպական արդֆինալանն է, ներկայացրած գործարանի, հիմնարկ-ձեռնարկի, դպրոցի կողմից, պետք է հատուկ

ուչադրություն դարձնել և կատարել նրա բոլոր կետերը:

Սանիտարական միջոցառումի աշխատանքներն ել ավելի հաջող կազմակերպելու, աշակերտության յեռանդն ու թափն ել ավելի սրելու այդ ուղղությամբ անհրաժեշտ է սոց-մրցման պայմանադիր կնքել հարեման դպրոցի հետ, սան-միջոցումի կանոնները կյանքում կիրառելու համար:

Կարելի չէ, նույնիսկ անհրաժեշտ է, պարբերաբար աշակերտներին կազմված բրիգադներ ուղարկել դպրոցները առողջապահական վիճակը ուսումնասիրելու համար:

Բրիգադները, ուսուցիչի կամ բժշկի ղեկավարությամբ, կպարզեն ու յերեման կհանեն հակաառողջապահական այն բոլոր յերեմույթները, վորոնք գոյություն ունեն դպրոցներում:

Սոց-մրցումն ու հարվածայնությունը վորպես աշխատանքի դիսպլոր մեթոդ, այս ասպարիդում յեմա պետք է հանգիստանա ամենաուժեղ դործոններին մեկը սան-միջոցումի կետերը լրիվ կատարելու համար:

Դպրոցական յերեխաների մեջ հատուկ ուշադրություն (մանավանդ մեծահասակների նկատմամբ) պետք է դարձնել ծխելու վրա: Մեր մատաղ սերնդին ցույց տալ ծխելու քաղաքական, տնտեսական և հակառողջապահական կողմերը, վորպես կապիտալիզմից մնացած մի ժառանգություն:

Մեր մատաղ սերունդը վոչ միայն չպետք է ծխի, այլ և ինքն ախտավորեն պետք է պայքարի նրա դեմ: Ծխախոտը վնաս է բերում վոչ միայն ծխողին, այլ և վնաս է բերում իր կողքի ընկերոջը, նույն սենյակում գտնվողներին, պետք է հիշել մա-

նավանդ, վոր դպրոցական հասակում քիչ չեն նայել ծխախոտից թունավորման սուր դեպքերը:

Դպրոցի դռների առաջ անպայման պետք է ունենալ մի քանի հատ քերիչներ և փալաններ, վորքերը սրբելու համար: Թե քերիչը և թե փալատը հասարակ բաներ են և ամեն մի դպրոց, ուղենա շատ հեշտությամբ կկարողանա ձեռք բերել, հակառակ դեպքում դրսի ամբողջ կեղտը ներս կգա դասարաններն ու միջանցքները և կդժվարացնի դպրոցում մաքրություն պահպանելը:

Իսկ դրսի կեղտի մուտքը դպրոցներ, առողջասլահության տեսակետից խոչոր նշանակություն ունի, քանի վոր այդ ձևով դյուրին են տարածվում վարակիչ հիվանդությունների մանրէները:



Գեորգիաի տպարան

Սրբագրից՝ Ո. Դասաբեկյան

Գառներ № 3186 հրատ. 1332 գլավ. 8964 տիրած 2000

Հանձնված է արաղորտի ջ հոկտեմբերի 1932 թ.

Ստորագրված է տպագրելու 22 նոյեմբեր 1932 թ.

2430

1311140

ՀԱՅԿԱՅԻՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0272098

2384

9766 25 ч.

Д-р А. Мадонн  
Саминимум в школе  
Госиздат СССР—Сектор негиздекий  
Дривань—1933

